0790847

Համաձայնագիր N 2

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 033/15/07/2015 պայմանագրում լրացումներ կատարելու վերաբերյալ

ք. Երևան

29 հունիս 2016թ.

«Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության փոխտնօրեն/կոմերցիոն տնօրեն Արամ Բարսեղյանի, ով գործում է N 002/14 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և «ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ Անուքաղ Համբարյանի, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), ղեկավարվելով Կողմերի միջև 15.07.2015թ. կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 033/15/07/2015 պայմանագրով (այսուհետ՝ «Պայմանագիր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.
   1.1. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետում (Տրամադրվող ծառայություններ) ավելացնել հետևյալ ծառայությունները.

1. Տրամադրվող Ծառայություններ

N	Նկարագրություն	Ամսական բաժանորդային վճար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	Հասցե/ՀՀ ոստիկանության ստորաբաժանում
1	U!Phone Corporate + 011220862, 011221387, 011224560, 011225493, 011225543, 011226492, 011227251, 011228062	8x2,500=20,000 16,000 ՀՀ դրամ սահմանաչափ	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 76, ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կ.Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի պահպանության բաժին, ՀԿՀՀ 00007516

* U!Phone Corporate + հեռախոսային ծառայության յուրաքանչյուր հեռախոսահամար ներառում է անվճար 360 րոպե խոսելաժամանակ ՀՀ քաղաքային ցանցում:

* Ընդ որում ծառայությունների ամսավճարը որոշվում է ըստ բաժանորդին փաստացի տրամադրված հեռախոսային ծառայությունների քանակի:

* Ընդ որում, 011 աշխարհագրական կոդով տրամադրվող հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը կատարվող հեռախոսազանգերի համար վճարում է հետևյալ սակագների հիման վրա:

* Սահմանաչափը գերազանցելուց հետո Բաժանորդի ելքային զանգերը, որոնք չեն ներառվում անվճար 360 րոպե խոսելաժամանակում, արգելափակվում են:

2. Ծառայությունների սակագները

Հեռախոսազանգերի ուղղություն	Սակագին (ՀՀ դրամ/րոպե)
Դեպի 060, 010 և 011 կոդերով ֆիքսված հեռախոսակապ	4
Դեպի ՀՀ մարզերի ֆիքսված հեռախոսային ցանցեր	4
Դեպի ՀՀ բջջային ցանցեր	24
Դեպի ԼՂՀ բջջային հեռախոսակապ	28
Դեպի ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր	18

1.2. Սույն համաձայնագրի 1.1. կետում նշված աղյուսակով սահմանված ծառայություններից յուրաքանչյուրի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման միջոցներից:

2. Պայմանագրի մյուս կետերը թողնվում են անփոփոխ:
3. Սույն համաձայնագիրը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և կնքման պահից:
5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Օպերատոր	Բաժանորդ
«Յուքոմ» ՍՊԸ	ՀՀ Ոստիկանություն
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4	Իրավ. հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 130
Գործ. հասցե՝ ք.Երևան, Սայաթ-Նովա 40/1	Գործ.հասցե՝ ք.Երևան, Մ. Բաղրամյան 76
ՀՎՀՀ 00024873	ՀՎՀՀ 00007516
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 001-264993-001	Հ/Հ 900011001147
Փոխտնօրեն/Կոմերցիոն տնօրեն՝	Ոստիկանության պետի տեղակալ՝
_____ Ա. Բարսեղյան	_____ Ա. Համբարյան